



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ԿԻՐԱԿԻ 21 Յուլիս 2019

120

DIMANCHE, 21 Juillet 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Զ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ  
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՊԱՀՈՅ  
SIXIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.  
PRÉMICES DU JEÛNE DE LA TRANSFIGURATION**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
**ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՌՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՍՏ  
ՆԱՄԱԿԷՆ  
(11.13-24)**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(14.13-21)**

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

**ROMAINS**

**11.13-24**

**MATTHIEU**

**14.13-21**

**Պատարագիչ՝**

**Հոգեւոր Հովիւ**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՂՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին**

**Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ Ժամը 10:30-ին**

**La Sainte Messe à 10:30**

**Հոգեհանգիստ Ժամը 12:00-ին**

**Requiem à 12:00**

**DIACRES - ACOLYTES**

**Chef de chœur : M Sarkis Barsemian**

**Organist : M Henri Farmer**

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES  
DE DIMANCHE**



**THE SUNDAY  
READINGS**

## **ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (11.13-24)**

Բայց կ'ըսեմ ձեզի՝ հեթանոսներուդ, որովհետև հեթանոսներուն առաքեալն եմ, իմ պաշտօնս կը մեծարեմ. Որպէս զի թերեւս իմ մարմինէս եղողներուն նախանձը շարժեմ ու անոնցմէ մէկ քանիները ապրեցնեմ: Վասն զի եթէ անոնց մերժուիլը աշխարհի հաշտութիւն է, հապա անոնց ընդունուիլը ի՞նչ պիտի ըլլայ, եթէ ոչ՝ մեռելներէն կենդանանալ: Արդ՝ եթէ երախայրիին սուրբ է, նաեւ զանգուածը եւ եթէ արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ: Եթէ այն ճիւղերէն մէկ քանիները կոտորտեցան ու դուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց վրայ պատուաստուեցար ու ձիթենիին արմատին եւ պարարտութեանը հաղորդ եղար, ճիւղերուն դէմ մի՛ պարծենար. իսկ եթէ պարծենաս, յիշէ թէ դուն արմատը վեր չես բռներ, հապա արմատը՝ քեզ: Ուրեմն պիտի ըսես՝ «Ճիւղերը կոտորեցան որպէս զի ես պատուաստուիմ»: Աղէ՛կ, անոնք անհաւատութիւնով կոտորեցան ու դուն հաւատքով հաստատուեցար: Մի՛ հպարտանար, հապա վախցիր. Վասն զի եթէ Աստուած բնական ճիւղերուն չխնայեց, գուցէ քեզի ալ չխնայէ: Ուստի տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը: Կործանուածներուն վրայ՝ խստութիւնը եւ քու վրադ՝ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութեան մէջ կենաս, ապա թէ ոչ դուն ալ պիտի կորսուիս: Իսկ անոնք եթէ իրենց անհաւատութեանը մէջ չկենան, պիտի պատուաստուին, վասն զի Աստուած կարող է զանոնք նորէն պատուաստել: Քանզի եթէ դուն քեզի բնական եղող վայրենի ձիթենիէն կտրուեցար ու այն բարի ձիթենիին վրայ, որ քեզի բնական չէր, պատուաստուեցար, ալ որչա՛ս փ աւելի անոնք որ բնական ճիւղեր են, պիտի պատուաստուին իրենց ձիթենիին վրայ:

## **ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (14.13-21)**

Երբ Յիսուս լսեց, անկէ նառով անապատ մը գնաց առանձին: Երբ ժողովուրդը լսեց, ոտքով անոր ետեւէն գացին իրենց քաղաքներէն:

Երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով իղձաց անոնց վրայ ու անոնց հիւանդները բժշկեց:

Իրիկունը իր աշակերտները եկան ու ըսին. «Հոս անապատ տեղ մըն է եւ ժամանակը ուշացած է. արձակէ ժողովուրդը, որպէս զի գիւղերը երթան ու իրենց կերակուր գնեն»: Յիսուս անոնց ըսաւ. «Հարկ չէ որ ատոնք երթան, դուք սուէք անոնց որ ուտեն»: Անոնք ալ ըսին. «Հոս ուրիշ բան մը չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ»: Ըսաւ անոնց. «Հոս, ինձի բերէք զանոնք»: Եւ հրաման ըրաւ որ ժողովուրդը խոտին վրայ նստեցնեն: Հինգ նկանակը եւ երկու ձուկը առաւ, դէպի երկինք նայելով օրհնեց ու կտրելով նկանակները աշակերտներուն տուաւ եւ աշակերտները՝ ժողովուրդին: Ամէնքը կերան ու կշտացան եւ տասներկու կողով լեցուն աւելցած կտորուանքներ վերցուցին: Անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն եւ սղաքներէն գատ:

## ROMAINS

### 11.13-24

Car je parle à vous, Gentils; certes en tant que je suis Apôtre des Gentils, je rends honorable mon ministère; [Pour voir] si en quelque façon je puis exciter ceux de ma nation à la jalousie, et en sauver quelques-uns. Car si leur rejection est la réconciliation du monde, quelle sera leur réception sinon une vie d'entre les morts? Or si les prémices sont saintes, la masse l'est aussi; et si la racine est sainte, les branches le sont aussi.

Que si quelques-unes des branches ont été retranchées, et si toi qui étais un olivier sauvage, as été enté en leur place, et fait participant de la racine et de la graisse de l'olivier; Ne te glorifie pas contre les branches; car si tu te glorifies, ce n'est pas toi qui portes la racine, mais c'est la racine qui te porte. Mais tu diras : les branches ont été retranchées, afin que j'y fusse enté. C'est bien dit, elles ont été retranchées à cause de leur incrédulité, et tu es debout par la foi : ne t'élève [donc] point par orgueil, mais crains. Car si Dieu n'a point épargné les branches naturelles, [prends garde] qu'il ne t'épargne point aussi. Considère donc la bonté et la sévérité de Dieu : la sévérité sur

ceux qui sont tombés; et la bonté envers toi, si tu persévères en sa bonté : car autrement tu seras aussi coupé. Et eux-mêmes aussi, s'ils ne persistent point dans leur incrédulité, ils seront entés : car Dieu est puissant pour les enter de nouveau. Car si tu as été coupé de l'olivier qui de sa nature était sauvage, et as été enté contre la nature sur l'olivier franc, combien plus ceux qui le sont selon la nature, seront-ils entés sur leur propre olivier?

## MATTHIEU 14.13-21

Et Jésus l'ayant entendu se retira de là dans une nacelle, vers un lieu désert, pour y être en particulier ; ce que les troupes ayant appris, elles sortirent des villes [voisines], et le suivirent à pied. Et Jésus étant sorti vit une grande multitude, et il en fut ému de compassion, et guérit leurs malades.

Et comme il se faisait tard, ses Disciples vinrent à lui, et lui dirent : ce lieu est désert, et l'heure est déjà passée ; donne congé à ces troupes, afin qu'elles s'en aillent aux bourgades, et qu'elles achètent des vivres. Mais Jésus leur dit : ils n'ont pas besoin de s'en aller; donnez-leur vous-mêmes à manger. Et ils lui dirent : nous n'avons ici que cinq pains et deux poissons. Et il leur dit : apportez-les-moi ici. Et après avoir commandé aux troupes de s'asseoir sur l'herbe, il prit les cinq pains et les deux poissons, et levant les yeux au ciel, il bénit [Dieu]; puis ayant rompu les pains, il les donna aux Disciples, et les Disciples aux troupes. Et ils en mangèrent tous, et furent rassasiés, et ils remportèrent du reste des pièces de pain douze corbeilles pleines. Or ceux qui avaient mangé étaient environ cinq mille hommes, sans compter les femmes et les petits enfants.





## Հոգևոր Հովիւի Պատգամը

**Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաները » (Մատթ. 14:15-21):**

Սիրելիներ, մեր Տէրը Իր երեք տարուան քարոզչութեանց ընթացքին բազմահարիւր բժշկութիւններու կողքին, քանի մը հրաշքներ կատարեց: Յիշենք Իր առաջին հրաշքը Կանա քաղաքի հարսանիքին ժամանակ, երբ գինին վերջացաւ եւ Իր մօր խնդրանքովը Ան ջուրը գինիի փոխեց, երկրորդը՝ Հայրոսի տասներկուամեայ աղջկան յարութիւնը, երրորդը՝ Իր մեռած բարեկամ Ղազարոսի յարութիւնը, ծովին վրայով քալելը, փոթորիկին հանդարտեցումը եւ այլն:

Աւետարանիչի այս պատմութիւնը Յիսուսի հրաշքներէն մէկն է: Ըստ անոր Բեթսայիդայի անապատին մէջ մէկ օրուայ ընթացքին առաւօտէն մինչև երեկոյ հինգ հազար հոգի հաւաքուած էին լսելու Յիսուսի քարոզութիւնները ու տեսնելու համար Անոր բժշկութիւնները: Ժողովուրդը շտապէն իր հետ ուտելիք չէր վերցուցած: Այս նկատի ունենալով առաքեալները Յիսուսի ուշադրութեան կը յանձնեն եւ կը խնդրեն, որ Ան ժողովուրդին ազատ արձակէ, որպէսզի երթան գիւղերը եւ ուտելու բան կարողնան գնել իրենց համար, քանի որ մօտ էր նաեւ գիշերը:

Յիսուս անոնց կը յորդորէ, որ իրենք կերակրեն ժողովուրդին: Առաքեալները կը զարմանան, որովհետեւ իրենց Վարդապետը շատ լաւ գիտէր, որ իրենք աղքատ էին եւ հնարաւորութիւն չունէին այդքան մարդու ուտելիք ապահովել: Յիսուսի խնդրանքին համաձայն Անոր մօտ կը բերեն հինգ զարիի հաց եւ երկու ձուկ: Մեր Տէրը կը նայի դէպի երկինք, կ'աղօթէ եւ կ'օրհնէ հացն ու ձուկը, որմէ ետք առաքեալներուն կը հրամայէ բաժնել խումբ-խումբ նստած ժողովուրդին:

Աւետարանիչը կ'ըսէ. «Ամէնը կերան ու յագեցան: Եւ տասներկու սակառ լիքը կտորտանքներու մնացորդներ աւելցան: Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաները»: Թէ ինչպէս տեղի ունեցաւ հինգ հազար հոգիի ուտելիքով ապահովուիլը հինգ հացով եւ երկու ձկով, չորս Աւետարանիչներուն մօտ բացատրութեան ոչ մէկ բառ չենք գտներ, որ պէտքի այդ փաստին վրայ հիմնուելով կարողանանք հրաշքին ձեռք բացատրել:

Ըստ ոմանց Յիսուսի ձեռքին մէջ հացն ու ձուկը երբեք չպակսեցան, այլ քանի անգամ, որ առաքեալները իրենց զամբիւղները դատարկելով Անոր մօտ վերադարձան, միշտ պէտք եղածը ստացան Յիսուսէն ու տարին եւ բաժնեցին ժողովուրդին: Ուրիշները կ'ըսեն, թէ առաքեալներուն զամբիւղներուն մէջ դրուած քիչ մը հացը եւ կտոր մը ձուկը բազմացան ու անոնք որքան իրենց ձեռքերը անոնց մէջ մտցուցին, միշտ բաշխելու որելէ բան մը գտան եւ այլն:

Հաւանականը առաջինն է այն պատճառով, որ Աւետարանի պատմութեան մէջ յիշուած զամբիւղներուն դատարկուիլը, նորէն լեցուիլը եւ ուտելիքի աւելնալը: Հոգեւոր իմաստով հացը այստեղ կը խորհրդանշէ Աստուծոյ խօսքը, որ աստուածային անսպառ սնունդ է իւրաքանչիւրիս համար, եթէ լսենք, իրագործենք եւ օգտուինք անկէ:

Յիսուսի հրաշքներուն եւ բժշկութիւններուն նպատակը մէկ էր, մարդոց ցոյց տալ, որ այդ բոլորը կը կատարէ ոչ թէ Իր, այլ միայն Հայր Աստուծոյ փառքին համար:

Մենք ալ իբրեւ Քրիստոսի հետեւողներ, իբրեւ հայ քրիստոնէաներ, պէտք է մեր բոլոր գործերը, նուիրումը, ծառայութիւնը, սէրն ու հաւատքը, ամէն ինչ կատարենք միայն Աստուծոյ փառքին համար: Աստուած տուած է կեանք մը, որ Անոր կողմէ մեզի ընծայուած ամենաթանկագին պարգեւն է, կեանք, որ պարտաւոր ենք լեցնելու իմաստութեամբ, արդարութեամբ, բարի, արդար եւ առաքինի գործերով, խոնարհութեամբ ու համեստութեամբ: Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան

## ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

«Քեզ հեռու պահե՛մ մարդոց հետ շատ խօսելէ, որպէսզի կարողանաս գոնէ քիչ մը զրուցել Աստուծոյ հետ»:

*Շենուտա Գ պատրիարք*

Ձեռնամուկ, աղօթքը, ապաշխարութիւնը անբաժան պէտք է ըլլան պահեցողութենէն, քանի որ ասոնք են հիմնական պայմանները, ուր կը գործէ Աստուծոյ բուժիչ ու քաւիչ զօրութիւնը:

*Շնորհք պատրիարք Գալուստեան*

## ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Յուլիս– Juillet

22, Երկուշաբթի – Ա օր Վարդավառի պահոց:

Lundi 22 – 1er jour du Jeûne de la Transfiguration.

23, Երեքշաբթի – Բ օր Վարդավառի պահոց:

Mardi 23 – 2ème jour du Jeûne de la Transfiguration.

24, Չորեքշաբթի – Գ օր Վարդավառի պահոց:

Mercredi 24– 3ème jour du Jeûne de la Transfiguration.

25, Հինգշաբթի – Դ օր Վարդավառի պահոց:

Jeudi 25– 4ème jour du Jeûne de la Transfiguration.

26, Ուրբաթ – Ե օր Վարդավառի պահոց:

Vendredi 26 – 5ème jour du Jeûne de la Transfiguration.

27, Շաբաթ– Յիշատակ Տապանակին հնոյ

և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:

Samedi 27 – Commémoration de l'ancienne Arche  
et Fête de la Sainte Église naissante.





## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### **ԱՂՕԹՔ ՆԱԽՔԱՆ ՔՆԱՆԱԼԸ**

Բարերար Տէր,  
որ քու մեծ գթութեամբ յաւիտենական հանգիստը  
պատրաստեցիր առաքինութեամբ վաստակածներուն համար,  
եւ քաղցր ձայնով քեզի կանչեցիր  
մեղքով ծանրաբեռնուածներն ու տառապողները:  
Շնորհէ՛, Տէր, որ մենք եւս  
անխոռով խաղաղութեամբ անցընենք այս գիշերը,  
եւ մեղքերու ծանրութենէն յոգնածներս  
քու ողորմութեամբդ հանգստացուր,  
եւ արժանի ըրէ մշտնջենաւոր հանգիստին,  
բոլոր սուրբերուն հետ միասին:  
Եւ տուր որ շնորհակալութիւն յայտնենք ու փառաւորենք քեզ՝  
Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*(Շարունակելի)*

### **PRIÈRE AVANT DE S'ENDORMIR**

Dieu bienveillant, toi qui, dans ta grande tendresse, as préparé le repos éternel pour ceux qui ont travaillé vertueusement; toi qui as appelé à toi de ta douce voix ceux qui sont fatigués ou sont accablés du poids des lourds péchés, en leur promettant le repos, accorde-nous aussi, Seigneur, de passer cette nuit sans trouble et dans la paix; et ceux qui ont travaillé, protège-les du poids des fautes, par ta miséricorde; et rends nous dignes du repos éternel parmi tous tes saints; et en te rendant grâce, nous te glorifions, avec le Père et l'Esprit Saint, maintenant et pour l'éternité de l'éternité. Amen.

*(à suivre)*

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 21 Յուլիս 2019



Օրդ. Շուշան Արոյեանի,  
Տ. և Տիկ. Արա Միհրան Արոյեանի և զաւակներուն՝  
Սօֆիայի և Քրիսթօֆր Ներսէսի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր և մեծ մօր՝

**ՄԻՐԱՆՈՅՇ ՄԱՂԱՔԵԱՆ ԱՐՈՅԵԱՆԻ**  
(SIRANOUSH MAGHAKIAN AROYAN)

Մահուան 2-րդ տարելիցին առիթով  
և իրենց սիրեցեալ հօր և մեծ հօր՝  
**ՆԵՐՍԷՍ ԱՐՈՅԵԱՆԻ (NERSES AROYAN)**

Մահուան 11-րդ տարելիցին առիթով  
Ինչպէս նաև

**ՔԷՇԻՇԵԱՆ, ՄԱՂԱՔԵԱՆ, ԱՐՈՅԵԱՆ ԵՒ ԿԱՐԻՔԵԱՆ**  
Գերդաստաններու համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ



Պրն. Շահէն Մետրոպեանի,  
Վանեսա Մետրոպեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր և մեծ մօր՝

**ԼՈՒՍԻ ՄԱՏԱԹԵԱՆԻ (LUCIE MADATIAN)**

Մահուան 3-րդ տարելիցին առիթով



Տ. Է. Տիկ. Սամուէլ Է. Վերժին Գայթանճեանի Է. զաւակներուն,  
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
 իրենց սիրեցեալ հօր, մեծ հօր, մեծ ծնողաց Է. հարազատներուն՝  
**ՆԵՐՍԷՍ ՍԷՓԷԹՃԵԱՆԻ (NERSES SEPETJIAN)**

Մահուան 6-րդ տարելիցին առիթով  
 ԵՒ

**ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ՎԵՐՃԻՆ ՍԷՓԷԹՃԵԱՆՆԵՐՈՒ  
 (HAYRABED & VERJINE SEPETJIAN)**

**ՄԱՆՈՒԿ ԵՒ ԷԼՄԱՍ ՊԱԼԵԱՆՆԵՐՈՒ  
 (MANOUG & ELMASD BALIAN)**

**ՄԱՐԻ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱԼԵԱՆՆԵՐՈՒ  
 (MARIE & VARTOUIHIE BALIAN)**

Հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Սօնիա Թըրնամեանի,  
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
 իր սիրեցեալ մօր՝

**ՄԱՐԿԱՐԷԹ ՊԱԼԻ ԹԸՐՆԱՄԵԱՆԻ  
 (MARGUERITE BALI TERNAMIAN)**

Հոգւոյն ի հանգիստ

**ՑԱԻԱԿՑԱԳԻՐ**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
 Ծխական Խորհուրդը

Ողբացեալ **ՎԵՐՈՆԻԲԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**

Մահուան տխուր առիթով

Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն  
 Հանգուցեալի բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,  
 որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԼԱՎԼԻ Ս. ԿԱՉ ԿՅՅԱՍԱՆԵԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
HOLY CROSS ARMENIAN APOSTOLIC CHURCH OF LAVAL  
ՕՏՔԱՌՈՒՄՅԻ Ս. ՄԵՏՐՈՂ ԿՅՅԱՍԱՆԵԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
ST. MESROB ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OTTAWA

**ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՄԱՆԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕԼ (ՎԱՐՂԱՎԱՌ)  
TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST (VARTAVAR)**

ՈՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՌԻԿՕ

**PILGRIMAGE TO RIGAUD**  
43 RUE DE LOURDES, RIGAUD, QC

**ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒԼԻՍ /SUNDAY, JULY 28, 2019**



Հանդիսաւոր Ս. Էւ Անմահ Պատարագ / Holy Mass  
կէսօրին ժամը / at - 12:30-ին noon

Պատարագիչ Էւ քարոզիչ / Celebrant

**ԳԵՐԸ. Տ. ԱՐԳՎՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ**

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

**HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN / Primate**

Ուշադրութիւն. Ճաշի մատուցում միմիայն Ս. Պատարագէն ետք  
**Attention:** The Lunch will be served only after the Holy Mass

Վարդավառի Տօսի Աւանդական Ջրախաղ  
(փոքրերուն համար փոխնորդ հագուստներ ունենալ)

**Festive Traditional Water Play**

(Don't forget to have extra cloths for kids)

ՕՐՕՊԻԻՍԻ ՄԵՎԵՆՈՒ

Մոնթրէալ - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center  
(Rue Salaberry) առաւօտեան ժամը 10:00-ին

Լաւալ - Ս. Կաչ Դայց. Առաք. Եկեղեցի (Centre Armenie 1025 Boul. Elizabeth,  
Laval, QC) առաւօտեան ժամը 10:30-ին

Սակ - Օթթայիւս Էւ ճաշ - Մեծերու - \$35 / Փոքրերու (5 -12 տարեկան) \$25

Սակ - Անձնական միջոց - ճաշ - Մեծերու \$25 / Փոքրերու (5 -12 տարեկան) \$15  
(0-5 տարեկան փոքրերը ձրի)

**BUS TRANSPORTATION**

Montreal - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center  
(Rue Salaberry) at 10:00 am

Laval - Holy Cross Armenian Church (Centre Armenie 1025 Boul. Elizabeth, Laval,  
QC) at 10:30 am

Fee - Bus & Lunch - Adult - \$35 / Children - \$25

Fee - Personal Transportation - Lunch - Adults \$25 / Children - \$15

(Free - Children - 0-5 age)

Տոմսերու ապահովման համար հեռաձայնել նշեալ թիւերէն մէկուն մինչեւ 27 Յուլիս  
For reservation & tickets please call one of the following phones until July 27<sup>th</sup>

- Մոնթրէալ / Montreal - Սարալ / Maral (514) 279-3066
- Լաւալ / Laval - Երան / Yeran (514) 609-8384
- Օթթաուա / Ottawa - Յակոբ / Hagop (613) 762-7341



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019  
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ  
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ

առաւօտեան ժամը 10:30-ին

Գառարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՀՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ  
Հոգևոր Հովի

Յաւարտ Ա. Գառարագի

«Խորովածի Տպասարկութիւն»

նախաձեռնութեամբ՝

Միակն խորհուրդի

Մասնակցութեամբ՝

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

«Անուշեղէնի «հաճառ» կազմակերպութեամբ՝

Տիկնանց Յանձնախումբին

Եկեղեցայ պարտեզին մէջ:

Մտարի Կուր՝ \$20



ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

DIVINE LITURGY  
AND BLESSING OF GRAPES

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

At the end of the Blessing of the Grape,  
the service of B.B.Q. organized by the Parish Council  
with participation of Bolsahay Cultural Center

Pastry sales,  
by assistant ladies from the church.



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / Email [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

## ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Սիրով կը յայտնենք, թե Շաբաթ 27 Յուլիս 2019-ի երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սր. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրհնութեամբ՝  
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյ պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,  
Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մուրք
- Ջրօրինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր՝ կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտտույ տուած գտնես»:*

«Հոգեւոր հայելի»

Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝  
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



# ՌԻԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

## PILGRIMAGE TO PÈLERINAGE EN


### ARMENIA



### ARMÉNIE

02.10.2019

15.10.2019




Հայաստանեայց Առաքելական Սուրբ  
Եկեղեցու Գանատահայոց Թեմը  
Օրհնութեամբ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ,  
Գերջ Տ. Աբգար եպիսկոպոս Յովակիմնանի՝  
կը կազմակերպէ 14 օրեայ Ռէտազնացութիւն  
դէպի Մայր Հայաստան:  
Մանրամանութիւններու համար հաճեցէք  
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:



The Armenian Diocese of Canada,  
with blessings of  
**His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate**  
is organizing a 14-day pilgrimage to Armenia.  
For details, please contact the Diocese.



Le Diocèse arménien du Canada  
organise un pèlerinage de 14 jours en Arménie,  
avec bénédictions du  
**Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.**  
Pour plus de détails, veuillez contacter le  
Diocèse.



USD \$1,400 PER PERSON IN DOUBLE ROOM  
SINGLE SUPPLEMENT \$400



**Price includes:** Hotel accommodation with Breakfast,  
14 Lunches, 1 Dinner, Entrance fees to the sites,  
Transportation, Professional Guide  
**Not included:** Visa fee, Airfare, Insurance.



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada»  
on Facebook to receive and  
share news about the Diocese.



WATCH

a documentary about the Pilgrimage. Find  
the «Armenian Diocese of  
Canada» Channel on YouTube.

